ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.2. Եվրոպա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Մեր հարևան քոչվոր էթնոսները չունենալով սեփական գիր, իրենց կարճատև պատմության ընթացքում 2–3 անգամ փոխել են իրենց գրերը:

Եվրասիան բաժանված է **Եվրոպա** և **Ասիա** աշխարհամասերի: Նրանց սահմանը պայմանական է, որը պատկերվում է միայն քարտեզների վրա, բնության մեջ այդպիսի սահման գոյություն չունի:

Եվրոպան փոքր աշխարհամաս է՝ մոտ 10 մլն քկմ տարածքով, սակայն մեծ է նրա դերը մարդկային քաղաքակրթության զարգացման գործում:

• • •

Հուսով ենք, որ գրերի այս տեսակները ձեզ կհետաքրքրեն և դուք տարբեր աղբյուրներից օգտվելով կփորձեք ուսումնասիրել և անհատական կամ խմբային եղանակով ներկայացնել որպես նախագծային հետազոտական աշխատանք: Այդ աշխատանքները կարող եք իրականացնել հայոց լեզվի և գրականության, պատմության, կերպարվեստի ուսուցիչների օգնությամբ: Կարող եք կազմակերպել նաև բանավեճ–քննարկում:

• • •

Եվրոպան քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, ռազմական, ֆինանսական շատ բարդ «մարմին» է, համաշխարհային տնտեսության «եվրակենտրոն» մոդելի բնօրրանը: Այդտեղ են գտնվում տնտեսապես զարգացած երկրների մեծ մասը: Եվրոպան գիտությունների, Աշխարհագրական մեծ հայտնագործությունների, վերածննդի, մեքենայական արտադրության, արդյունաբերական հեղափոխության հայրենիքն է, պատմությունից ձեզ հայտնի «երեսնամյա», «հարյուրամյա», Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների թատերաբեմը:

• • •

Ժնևում, Բազելում, Լոզանում, Փարիզում, Հռոմում, Վիեննայում, Բրյուսելում և այլ քաղաքներում են գտնվում ՄԱԿ-ին առընթեր երեք տասնյակից ավելի միջազգային կազմակերպություններ: Եվրամիության երկրների սահմանները միմյանց նկատմամբ «թափանցիկ» են, կարելի է երթևեկել առանց վիզայի, ազգային արժույթի փոխարեն գործում է միասնական արժույթը՝ եվրոն, ստեղծվել է միասնական ներքին շուկա և այլն: «Ընդլայնված Եվրոպա – նոր հարևաններ» ծրագրում ընդգրկված է նաև Հայաստանի Հանրապետությունը:

• • •

Բնակչության բնական աճը ցածր է, ինչը պայմանավորված է ուրբանացման բարձր մակարդակով՝ 70–95%, տնտեսապես ակտիվ բնակչության կազմում կանանց բարձր ներգրավվածությամբ: Ավելի քան երկու տասնյակ երկրներ հայտնվել են «ժողովրդագրական ձմռան» փուլում: Երկար ժամանակ Եվրոպան դասական արտագաղթի աշխարհամաս էր. Ամերիկայի բնակչության մեծ մասը եվրոպական ծագում ունի:

Զարգացման բարձր մակարդակով առանձնանում են հատկապես Արևմտյան, Հյուսիսային, մասամբ՝ Հարավային Եվրոպայի երկրները: Դրանք մեծ մասամբ զարգացման հետարդյունաբերական փուլում են: Արևելաեվրոպական երկրների տնտեսության զարգացման հետ մնալը պայմանավորված է նախկինում սոցիալիստական ճամբարին պատկանելով:

• • •

Արևմտյան, Հյուսիսային և Հարավային Եվրոպայի երկրներին բնորոշ է արտադրողական ուժերի և շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացման շատ բարձր մակարդակ: Այս երեք տարածաշրջանները կարևոր դեր են խաղում համաշխարհային տնտեսական, քաղաքական, գիտական և մշակութային կյանքում:

• • •

Եվրասիայի շատ շրջաններ մարդու կյանքի և նրա տնտեսական գործունեության համար ունեն նպաստավոր բնական պայմաններ և հարուստ ու բազմազան բնական ռեսուրսներ: Այդպիսին են, օրինակ Միջերկրական ծովի, Եվրասիա մայրցամաքի հարավային խոշոր գետերի՝ Տիգրիս, Եփրատ, Ինդոս,

Գանգես, Մեկոնգ ավազանները, Հնդկական օվկիանոսի և Արևելաչինական ծովի ասիական ափերը:

• • •

Միայն Անգլիայի գաղութացրած տարածքներն (34 մլն քկմ) ավելի մեծ էին քան Աֆրիկան: Ժամանակին ասում էին, որ «Բրիտանական կայսրության տարածքների վրա արևը երբեք մայր չի մտնում»: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները պատճառ դարձան անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն և այլ լեզուների, ինչպես նաև քրիստոնեության արագ տարածմանը: Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայում ստեղծվեցին սոցիալիստական երկրներ, որոնք գոյատևեցին մինչև 1990-ական թվականները:

Եվրոպայում ապրում է ավելի քան 700 մլն մարդ:

• • •

Եվրամիության մարմիններն են ***Եվրոպական խորհրդարանը*** (նստավայրը՝ Ստրասբուրգ), ***Եվրոպական միության խորհուրդը***, ***Եվրոպական հանձնաժողովը***, ինչպես նաև ***Եվրոպական խորհուրդը*** (չշփոթել Եվրոպական միության խորհրդի հետ) և ***Եվրոպական դատարանը, նստավայրը՝ Հաագա:*** ԵՄ գործադիր մարմնի նստավայրը Բրյուսելն է: Հաշվի առնելով Եվրոպայի քաղաքական քարտեզի ձևավորման պատմական, բնական, տնտեսական առանձնահատկությունները, ընդունված է Եվրոպա աշխարհամասը բաժանել չորս տարածաշրջանների՝ Արևելյան Եվրոպա, Արևմտյան Եվրոպա, Հյուսիսային Եվրոպա և Հարավային Եվրոպա: